ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/87

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝ «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Հարությունյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.06.2019թ. թիվ /26-1/9886-2019 գրությամբ «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.06.2019թ. թիվ /18-2/28065-2019 գրության հիման վրա, 13.06.2019թ. «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.06.2019թ. թիվ /18-2/28065-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/6-Լ) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնահատող հանձնաժողովը 29.05.2019թ-ի թիվ 2 նիստով ընթացակարգի 1-5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ին:

Սահմանված կարգով, 30. 05. 2019թ. -ին ընթացակարգի քարտուղարը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե է ներկայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալները՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով: 04. 06. 2019թ. -ին ստացվել է հարցման պատասխանը, որով արձանագրվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ն ունի 8 539 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորություններ:

Գնահատող հանձնաժողովի 05. 06. 2019թ. -ի թիվ 3 նիստով «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է և առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Պոժմաստեր» ՍՊԸ-ն:»:

Միևնույն ժամանակ ներկայացրել են թիվ «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/6-Լ)» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. <u>«Ոսկե Երազներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.06.2019թ. գրությամբ դիմել է «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.06.2019թ. թիվ /26-1/9886-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

«Ոսկե Երազներ» ՍՊԸ-ն 18.06.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ոսկե Երազներ» ՍՊԸ-ն գործում է 1998 թվականից, գրանցված է արտադրական վտանգավոր օբյեկտի ռեեստրում (Ա40 4/1-0002 տրված՝ 24.05.2006թ) և բազմիցս մասնակցել է տարբեր մրցույթների: Ընկերությունը հանդիսանում է պաշտպանության նախարարության ռազմական տեխնիկայի հատուկ մասերի փորձարկման, վերանորոգման և լիցքավորման մասնագիտացված ընկերություն: Ընկերությունը միշտ պարտաճանաչ և պատշաճ կատարել է բոլոր պայմանագրերը: Եղել է պարտաճանաչ հարկատու: 28.05.2019թ. հայտ է ներկայացրել պետական եկամուտների կողմից հայտարարված ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/6-Լ) ծածկագրով մրցույթին մասնակցելու նպատակով: Վրիպման արդյունքում անձնական էջում հարկային պարտքը՝ 8539 ՀՀ դրամը մեր կողմից ընկալվել է որպես հավելավճար: Պարտքը վճարվել է 04.06.2019թ-ին: Հաշվի առնելով «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ի 21 տարվա աշխատանքային փորձը և Ընկերության գործունեության կարևորությունը խնդրում եմ ընդառաջել և չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2019/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կրակմարիչների վերալիզքավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/6-Լ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

28.05.2019թ.-ին Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/6-Լ)» ծածկագրով գնանշման հարցման հրավերով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին ներկայացրած հայտարարությամբ հայտարարել և

հավաստել է, որ բավարարում է «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/6-Լ)» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի 29.05.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ն 1-5-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 30.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (28.05.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 8539 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը, 05.06.2019թ. թիվ 3 արանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ի հայտը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների թույլատրելի շեմը գերազանցելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.06.2019թ. թիվ /26-1/9886-2019 գրությամբ «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Վերոնշյալ հոդվածների դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին: Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ՊԵԿ հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Եթե ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Տվյալ դեպքում մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Այս դեպքում մասնակիցը ընդգրկվում է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կրակմարիչների վերալիզքավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/6-Լ)» ծածկագրով ընթացակարգի արդյունքում՝ «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ն 1-5-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 30.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (28.05.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 8539 ՀՀ դրամ գումարի չափով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 28.05.2019թ.-ին, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ուստի նման պայմաններում «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.06.2019թ. թիվ /26-1/9886-2019 գրությամբ «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ոսկե Երազներ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**